

* * *

Դեռ ուրիշ ինչ նոր ելեկտրական գիւտեր ալ կրնան ըլլալ:

— Դժուար է այս բանս հաստատել և որոշել. սակայն թերևս օր մը մեր առջնը պարզուին քնութեան ամենամեծ գաղտնիքներն: Օդաչու ճանապարհորդութեան գժուարատիննիուն խնդիրը լուծելու համար միշտ բանի մը կ'սպասեմ, որ կարենայ օգնել ինձ այս հանգոյցը քակելու համար. այս նպատակաւ շատ աշխատեցայ, այլ արդ դինք մը շտեսայ. բայց այս գիւտը գեռ գտած ուրիշ բազմաթիւ գիւտեր ալ պիտի գտնուի. սակայն միւսն ալ պիտի գտնուի:

Այս խօսքերս ըստած ժամանակ Պ. Էտիւլն յօնքերն ամփոփած կարծես թէ օգոյ մէջ անտեսանելի բան մը կը դիտէր.

— Ապահով եղիր, աւելցուց, որ կազով աշխատողներն ի գուրիենց ժամանակը կը կորսնցնեն, ոչ երբեք պիտի յաջողին. ահաւասիկ օգապարիի գնդոց ուղղութեան խնդրոյն լուծումը. սոտիսեալ ենք միշտ օդէն աւելի ծանր մերենայ մը ՚ի գործ ածել, և ահա ոչիշ զօրուրիշն մը պէտք է որ այս մերենան բարձրացնէ. գժուարութիւնը ահա այս «գօրութիւնը» գտնալուն մէջն է. և թերես այս օրերուս մէջ ես գըտնեմ՝ զայն... ո՞ գիտէ... .

Ասուպի մը անկորումն ՚ի Շուէտ. — Յիրաւի հազուագիւտրան մը պիտի լինի, եթէ կարողանան սառուցիւ նշանակել ասուպի մը անկ. ման վայրկեանը և նորա պայմանները՝ յորս կը կատարուի այս երեսով:

Սոյն բանս մերձակայ օրերուս մէջ դիպեցաւ ՚ի Շուէտ, յորում այս մարմիններէն մին տարւոյս Ապիլի նին վար ինկաւ: Անկորումն եղաւ կարմիր լուսոյ փայլմամբ և որոտման նման շառաչինով: Այս ասուպս կը կըռէ և հազարագրամ. Յօ հարիւրորդամէդը խորութեամբ փոս մը փորեց գետնին վրայ՝ ինկած տեղը, այլ գուրս ցատքեց և հողին վերայ գտնուեցաւ փոսին ճեղքին մօտ:

Պարոն Նորուանսքիոլ առաւ զայն թոռքհամի թանգարանին համար, ուր առաջին անգամ զայն քննեցին: իւր ընդհանուր գոյնն է թուխ, մինչդեռ ներքին մասունքն տժգոյն և մոխրագոյն են: Նորա զանգուածն թուի թէ մանգանէկդ կազմուած է, յորում կը նշմարուին դեղին և կանաչ մետաղաց մասնիկներ. իւր ջերմութեան աստիւ ճանն հասաւ մինչեւ ՚ի կարմրութիւն:

Զիոց վրայէն ձանձերը հեռացնելու հնարք.

10. Նախ, պէտք է սակաւիկ ինչ զիոց (cade) իւզով շփել զլուխը և կենդանւոյն զգայուն մասերը: Այս իւզս կը գտնուի ամէն գեղագաճառաց քով:

20. Երկրորդ, պէտք է քացախով շփել ձիոյն գլուխը։ Այս 'ի զործ զրուած հնարքս, կենդանւոյն սաստիկ տաքութիւն զգացած ատենը և միանդամայն երկար ընթացից միջոց, կրկին օգտակարութիւն ունի. նախ կը հեռացնէ ճանճերը ձիոց վրայէն՝ որբ կը նեղեն զկեն- դանիս, և երկրորդ նոր զօրութիւն մի ևս կուտայ անոնց. և այս բա- նըս վարակի տեղ կը ծառայէ։

Փայտէ իշտ հանելոր արուեստն 'ի Շուէտ։ — Այս արուեստս եր- թալով տարուէ տարի կը զարգանայ 'ի Շուէտ։ Մասոին այն մասերն՝ որբ միշև ցայսօր անօգուտ բան մի համարուած էին, ինչպէս կոճղե- րըն և արմագիք, այժմ այլ ևս անտառաց մէջ չեն ձգեր, այլ զանա- զան գործողութեանց միջոցով բաց յիւղէն՝ կը հանեն ևս խէժ բենից, քացախական թիժուա, ածուխ և կուպր։ Այս փայտիւղն՝ զոր արդ կը հանեն 'ի Շուէտ, սովորական կանթեղաց մէջ չի գոր- ծածուիր, կարգէ գուրս ծուխ հանելուն պատճառաւ։ Ուստի պէտք է մասնաւոր առանձին կանթեղաց համար զործածել զայն, որոնք, նման ըլլան կազի կանթեղաց։

Փայտիւղոյն մէկ լիդըն կ'արժէ 55 ասմթիմ. ամեննին չի ճայ- թիր և կազէն 25 անգամ աւելի դանդաղ կը սպառի։ Այս իւղս գրե- թէ կելէ միայն յեղենսափայտէ և 'ի սոնւոյ։ Շուէտի մէջ երեսուն գործատունք կան այս արուեստիս, ուր տարուան մէջ գրեթէ 40 հա- զար լիդը իւղ կը հանեն։

Տեղափոխուրիւն կենդանեաց։ — Ամենայն կենդանի ունի յինքեան՝ ընդարցոյ ջանք մի իւր գոյութիւնը պահելու և աճեցնելու համար, որոյ արդինքն է տեղափոխութիւնն։ Զմեռ ատեն բազում ծովային հորթք գէպ 'ի հարաւ կը գաղթեն. սէնք¹ և պիրենեան այծք կ'իշնեն 'ի հովիտս, իսկ իշլորդն գրեթէ 1, 80 մէդր գետնին տակ կը մտնէ։ Սովորաբար ցամաքային կենդանեաց ճանապարհորդութիւնն աւելի կարծէ, քան ջրային և օգային կենդանեաց։ Այնան ժամանակ գաղ- թական թոշունք՝ մկեալ իրենց բնական ազգմամբ կը դիմեն գէպ 'ի բեւեռն, իսկ գարնան՝ վերստին կը գտառնան։ Գրեթէ ամենայն թըլո- շունք՝ իրենց ճանապարհորդութիւնը կ'ընեն ցերեկ ատեն, 'ի բաց ա- ռեալ լրամարգին, վայրի կարապն, և այլ մի քանի թոշունք, որբ գիշեր միջոց կընեն։ Թոշոյ իւրաքանչիւր տեսակն՝ ընդ մէջ հասա- րակածին և բեւեռի՝ գաղթականութեան գօտի մի կը գրաւեն, 20 աստիճանի ներքեւ։ Այսպէս, անսա քիէմալիսն կրոէլանտէն կը դի- մէ 'ի Շուէտ և յլնդիա. դրախտապան հաւանչ ձմեռ ատեն իսլան- տայէն կ'երթայ 'ի հիւսիսային գերմանիա։ կրտցարն լարոնիայէն և Սիպերիայէն 'ի գերմանիա. արագին, կուռնկն և ծիծառն կը գաղ-

1. Beona, առասկ մի եղնիկ է։

2. Ortolano.

3. Beccacchia,

թեն հիւսիսային ծւրոպայէն դէպի Պէրպէրիստան և յեգիպտոս։ Այս թռչնոց ճանապարհին ուղղութիւնն է Հարաւ-արևելք և հիւսիս-արևելք։

Թատերախօս գործի։ — Անցեալ օր Պ. Էտիսըն մինչդեռ Փարիզու աշխարհանդիսին մէջ հեռախօս գործիներու արահակը կ'այցելէր՝ անկործելի բան մը պատահեցաւ։ Պէրթըն հեռախօս գործւոյն մի հանճարեղ գործածութիւնը ներկայացուց հոչակաւոր ամերիկացւոյն։ Այս նոր գործին կը կոչուի թատերախօս։ քիչ ատենէն այս գործին քաղաքին այլ և ոչըլ տեղերը պիտի հաստատուի։ 50 հարիւրեակ վճարելով ամէն մարդ կրնայ հինգ վայրկենի չափ լսել տեսարանին մէջ երգուած երաժշտութիւնը։ Ներկայացուցած ժամանակ գործին նուագահանդիսի մը հետ հաղորդակցութեան մէջ էր, որով Պ. Էտիսըն ամենամեծ ճշգութեամբ լսեց բաւական հեռաւորութեամբ տըրուած նուագահանդէսն։ մեծանուն ելեկուրագէտն աղաչեց հնարողաց որ այս գործին 'ի նիւ-Եօրք ևս հաստատեն։ Արդեօք Երբ պիտի լսենք անդրատլանդեան նուագածութիւնքը։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Անգղիս։ — Այս ամսոյս քաղաքական նշանաւոր դէպքն եղաւ յԱնգղիս Գերմանիոյ կայսեր Գուլիէլմոսի այցելութիւնն առ Վիկտորիա։ այս այցելութիւնը ընդունեցաւ բրիտանական մեծ և հզօր ժողովուրդը իւր արժանավայել պատուով։ Գերմանիոյ արդի կայսեր պատերազմասէր երուան բնութիւնը ամէն պետական յայտնի գիտնարկ մեծամեծ և ահեղ պատերազմական հանդիսօք պատուեցին զինք։ Անգղիս ալ երիտասարդ վիհապետին աշաց առջն պարզեց ցարդ չունենուած տեսարան մը։ 100 նաւերէ աւելի բազկացեալ նաւատորմ մը, որ 'ի մի հաւաքուեր էր անհաւատալի երագութեամբ երեք օրուան մէջ կատարեց իր պատերազմական շարժումները ողջունելով զիկայսրն։ Գուլիէլմոս մեծ ուրախութիւն և գոհութիւն յայտնեց մերձակայ անձանց՝ այսպիսի մեծ և չտեսնուած նաւահանգղիսի մը համար։ զարմացաւ և գովեց արդէն Անգղիսացոց բնածին և ընդարդում ծովային շարժմանց կատարելութիւնն և նշանակած համար։ և յետ ամենասիրալի ընդունելութեան 'ի կողմանէ թագուհացն, ջերմ համակրանօք մեկնեցաւ յԱնգղիսէ։

Բնական է, այսպիսի այցելութիւնն մը բազում մեկնութեանց առիթ եղաւ։ Անգղիսի նորհրդարանին մէջ երեսփոխանաց մին հարցուց կառավարութեան։ «Արդեօք ըստ զրուցաց ճիշդ է որ Անգղիս ևս ծածուկ և գաղտնի դաշնագրութեամբ յարեցաւ յերրակի